


Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում.

Կարգավորման ջանքերի առաջմղում
Անկարայի՝ «Ադրբեջանն առաջինը»
քաղաքականության ֆոնին





Բովանդակություն

Ներածություն	3
Ամփոփագիր	5
«Թուրքիայի դարը» հայեցակարգը Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում	6
Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում. աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության փոխկապակցվածությունը	8
Թուրքիան և Ռուսաստանը Հարավային Կովկասում. գործընկերներ, թե մրցակիցներ	10
Թուրքիան և Իրանը Հարավային Կովկասում. մրցակցություն, թե փոխադարձ վնասում	13
Թուրքիա և Ադրբեջան. «մեկ ազգ, երկու պետություն»	15
Թուրքիան և Վրաստանը. աշխարհատնտեսությունը գործողության մեջ	17
Թուրքիա և Հայաստան. վաղեմի հակառակորդներ և հուսադրող հարևաններ Եզրակացություն	19 24

<https://doi.org/10.71308/TSZH8539>

Սույն զեկույցը գրախոսվել է հետազոտողների, ԱՊՐԻ Արմենիայի ղեկավարության և արտաքին փորձագետների կողմից: Այն նաև ենթարկվել է փաստերի ստուգման և խմբագրման:

Այս զեկույցում ներկայացված տեսակետները, եզրակացությունները և առաջարկները պատկանում են հեղինակին/հեղինակներին: Դրանք ամբողջությամբ չեն արտահայտում ԱՊՐԻ Արմենիայի տեսակետը:



Ներածություն

2020թ-ի Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը և դրան հաջորդած աշխարհաքաղաքական զարգացումները բացահայտեցին Թուրքիայի երկակի դերը Հարավային Կովկասում: Չնայած Անկարայի և Մոսկվայի, ինչպես նաև Մոսկվայի և հավաքական Արևմուտքի միջև առկա լարվածությանը՝ Թուրքիան կարողացել է հանդես գալ որպես տարածաշրջանային տերություն: Աշխարհաքաղաքական բևեռացման վերելքի ժամանակաշրջանում նրա աճող ներկայությունը Հարավային Կովկասում չի առաջացնում հակազդեցություն ո՛չ Ռուսաստանի, ո՛չ հավաքական Արևմուտքի կողմից: Վերջին տարիների իրադարձությունները Հարավային Կովկասում, որը ժամանակին գտնվում էր բացառապես Ռուսաստանի վերահսկողության և ազդեցության ներքո, հարցեր են առաջացրել տարածաշրջանի նկատմամբ Թուրքիայի ծրագրերի վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության միջոցով փորձել ենք պարզել Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակներն և ուղղությունները: Մենք ուսումնասիրել ենք Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ընդհանուր առմամբ և, մասնավորապես, Հարավային Կովկասի երեք երկրների նկատմամբ, ինչպես նաև ներկայացրել ենք առաջարկներ առ այն, թե ինչպես մասնաբերել Հարավային Կովկասում Թուրքիայի կողմից «Ադրբեջանն առաջինը» վարվող քաղաքականության պայմաններում և նպաստել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը:

Մեթոդաբանություն

Իրականացվել է գրականության ուսումնասիրություն, ինչպես նաև 2025թ-ի հուլիս-օգոստոս ամիսներին անցկացվել են հարցազրույցներ Թուրքիայի արտաքին քաղաքականությամբ զբաղվող 18 հայ, թուրք և օտարերկրյա փորձագետների հետ: Զեկույցի տվյալները հարստացվել են նաև Հայաստանում օտարերկրյա դիվանագիտների հետ քննարկումների և 2025թ-ին Նիդերլանդներում, Թուրքիայում և Վրաստանում կայացած Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականությանը նվիրված միջազգային համաժողովների և սեմինարների, ինչպես նաև ԱՊՐԻ ֆորում 2025-ի շրջանակներում տեղի ունեցած շփումների և քննարկումների արդյունքում:

Ճնորհակալություն ենք հայտնում բոլոր հարցվածներին, ներառյալ (անունները դասավորված են այբբենական կարգով)

- Գյոնյուլ Թոլ, Մերձավոր Արևելքի ինստիտուտ, ԱՄՆ
- Դորոթի Շմիդ, Միջազգային հարաբերությունների ֆրանսիական ինստիտուտ, Ֆրանսիա
- Էլեոնորա Տաֆուրո Ամբրոզետտի, Միջազգային քաղաքական հետազոտությունների իտալական ինստիտուտ, Իտալիա
- Թոռնիկե Շարաշենիձե, Վրաստանի հանրային կապերի ինստիտուտ, Վրաստան
- Լևոն Հովսեփյան, Արևելագիտության ինստիտուտ, Հայաստան
- Կարոլ Վասիլևսկի, Արևելյան հետազոտությունների կենտրոն, Լեհաստան
- Միթաթ Չելիքչալա, Քադիր Հաս համալսարան, Թուրքիա
- Մուսթաֆա Այդըն, Միջազգային հարաբերությունների խորհուրդ, Թուրքիա
- Պետեր Պալ Կրանից, Միջազգային հարաբերությունների հունգարական ինստիտուտ, Հունգարիա
- Ռիչարդ Կիրակոսյան, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն, Հայաստան
- Ռուսիֆ Հուսեյնով, Թուփչուբաշև կենտրոն, Ադրբեջան
- Վալի Գովմոհամադի, Տարբիաթ Մոդարես համալսարան, Իրան
- Քրիստոֆ Ստրախտա, Արևելյան հետազոտությունների կենտրոն, Լեհաստան



Նախապատմություն

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան, Ռուսաստանի հետ միասին, դարձել է Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության վրա ազդող գլխավոր տերություններից մեկը: Նրա ազդեցության հիմքն է Ադրբեջանի հետ ընդհանուր աշխարհագրական, պատմական, լեզվական և էթնիկական կապվածությունը, որն արտահայտված է «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսով: Հարավային Կովկասի ռազմավարական դիրքը, որն ապահովում է Կասպից ծովի ավազանի էներգետնությունների մուտքը միջազգային շուկաներ՝ շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը, ինչպես նաև կապը Կենտրոնական Ասիայի հետ, ուժեղացրել է տարածաշրջանի կարևորությունն Անկարայի համար:

Թուրքիան հաջողությամբ զարգացրել է Ադրբեջանի և Վրաստանի հետ եռակողմ ռազմավարական գործընկերությունը, որն ամրագրված է 2012թ-ին կնքված Տրապիզոնի հռչակագրով, սակայն այն չունի դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի հետ և 1993թ-ին փակել է վերջինիս հետ իր սահմանը՝ աջակցելով Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում: 2008-2009թթ-ին Թուրքիան և Հայաստանը հարաբերությունների կարգավորման փորձ կատարեցին այսպես կոչված «ֆուտբոլային դիվանագիտությամբ», որը, սակայն, ձախողվեց հիմնականում Ադրբեջանի ագրեսիվ դիմադրության պատճառով:

2020թ-ի Լեռնային Ղարաբաղի պատերազմը նշանավորեց Հարավային Կովկասում Թուրքիայի մասնակցության նոր դարաշրջան, քանի որ Անկարային հաջողվեց փոխել տարածաշրջանում status quo-ն՝ նպաստելով Ադրբեջանի հաղթանակին այդ հակամարտությունում: Չնայած Թուրքիայի՝ Ադրբեջանին ցուցաբերած աջակցությանը՝ Թուրքիան և Հայաստանը 2020թ-ի պատերազմի ավարտից քիչ անց սկսեցին հարաբերությունների կարգավորման նոր գործընթաց: Հայաստանի կառավարությունը Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը դիտարկում էր որպես իր «խաղաղության օրակարգի» բաղադրիչ մաս, մինչդեռ Անկարան այն ընկալում է տարածաշրջանում իր ազդեցության ուժեղացման ավելի լայն ռազմավարության շրջանակներում: Ռուս-ուկրաինական պատերազմի սկիզբը խթանեց Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության վրա ազդելու Ռուսաստանի կարողությունը, քանի որ Մոսկվան ռեսուրսները հիմնականում ուղղեց պատերազմ մղելուն, ինչպես նաև Միացյալ Նահանգների և Եվրամիության (ԵՄ) հետ առկա հակամարտությանը: 2023թ-ի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ռազմական զավթումը և ռուս խաղաղապահների պասիվության արդյունքում հայ բնակչության բռնի տեղահանումն էլ ավելի թուլացրին Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասում՝ Թուրքիային ընձեռնելով իր ազդեցությունն ուժեղացնելու նոր հնարավորություններ:

Տարածաշրջանային ուժերի հավասարակշռության փոփոխությունն արտացոլում է նախագահ Էրդողանի՝ Թուրքիան միջին տերությունից գլոբալ ուժի վերածելու ծրագիրը, որն ունակ է ազդեցություն գործել բազմաթիվ տարածաշրջաններում, այդ թվում՝ Մերձավոր Արևելքում, Արևմտյան Բալկաններում, Սև ծովում, Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Միջերկրական ծովի արևելյան մասում և Հյուսիսային Աֆրիկայում:



Ամփոփագիր

- Թուրքիայի ներկայիս արտաքին քաղաքականության հիմքը 2023թ-ին Նախագահ Էրդողանի կողմից ձևակերպված «Թուրքիայի դարը» հայեցակարգն է: Դրա հիմնական Նպատակն է բարձրացնել երկրի դերը տարածաշրջանային և միջազգային հարաբերություններում՝ Թուրքիան վերածելով մի երկրի, որն ունակ է համաշխարհային մակարդակով կիրառել իր ուժը:
- Թուրքիան Հարավային Կովկասը դիտարկում է որպես աշխարհաքաղաքական, ինչպես նաև աշխարհատնտեսական տեսանկյունից կարևոր տարածաշրջան՝ Կենտրոնական Ասիային կապող կամուրջ, բուֆերային գոտի Ռուսաստանի հետ և հարևան տարածաշրջան, որը կարող է Թուրքիան վերածել գլխավոր էներգետիկ, տրանսպորտային և լոգիստիկ կենտրոնի:
- Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում հիմնված է և, հավանաբար, կմնա հիմնված Ադրբեջանի հետ ռազմավարական դաշինքի վրա և կարող է ձևակերպվել որպես "Ադրբեջանն առաջինը" քաղաքականություն:
- Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում սահմանված է երկու հակասական գործոնով: Առաջինը ձգտում է Ռուսաստանի հետ ստեղծել տարածաշրջանի համատեղ կառավարում՝ ընդհանուր շահերի հիման վրա: Երկրորդը ձգտում է Ռուսաստանին աստիճանաբար դուրս մղել Հարավային Կովկասից և Թուրքիան վերածել տարածաշրջանային հեգեմոնի:
- Թուրքիան իրանին չի դիտարկում որպես Հարավային Կովկասում հզոր մրցակից Թեհրանի վերջին աշխարհաքաղաքական անհաջողությունների և աճող տնտեսական խնդիրների պատճառով: Այնուամենայնիվ, Թուրքիան մտահոգված է Անկարայի տարածաշրջանային Նախագծերը խափանելու Իրանի ունակությամբ, ուստի կապեր է պահպանում Թեհրանի հետ՝ իր շահերին ցանկացած հնարավոր վնասը կանխելու Նպատակով:
- Թուրքիան շահագրգռված է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ՝ Նրան դիտարկելով տարածաշրջանային հեգեմոնի դերում հաստատվելու իր ծրագրերում բացակայող տարր: Սակայն իր «Ադրբեջանն առաջինը» քաղաքականության պատճառով Թուրքիան շարունակելու է սպասել Ադրբեջանի կողմից "կանաչ լույսի" Նախքան կարգավորման գործընթացում հստակ քայլեր ձեռնարկելը:
- Տեսանելի ապագայում Թուրքիան կմնա Հարավային Կովկասում ազդեցիկ տերություններից մեկը: Հայաստանը պետք է երկակի ռազմավարություն որդեգրի Թուրքիայի նկատմամբ: Հարաբերությունների կարգավորման շուրջ բանակցությունները շարունակելուն զուգահեռ՝ Հայաստանը պետք է պատրաստ լինի ավելի ճիշտ գործել Թուրքիայի կողմից գործընթացի ձգձգման պայմաններում, որի Նպատակն է Հայաստանին դրդել Ադրբեջանի կողմից պահանջվող զիջումների իրականացման: Թուրքիայի կողմից այս ձգձգման քաղաքականությանը հակազդելու համար անհրաժեշտ կլինի դիվանագիտական աջակցություն գործընկերների կողմից հայ-թուրքական սահմանի բացման օգտին:



«Թուրքիայի դարը» հայեցակարգը Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում

2023 թվականից ի վեր՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքը «Թուրքիայի դարը» հայեցակարգն է: Այս արտահայտությունը գործածության մեջ է դրել նախագահ Էրդողանը¹, իսկ այնուհետ՝ 2023թ-ին, հայեցակարգն առավել մանրամասն ներկայացրել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը²:

Այս ռազմավարության հիմնարար սկզբունքները կենտրոնացած են փոփոխվող աշխարհակարգի պայմաններում Թուրքիայի հարևանությամբ անվտանգության ապահովմանը և Թուրքիայի գլոբալ նպատակների առաջխաղացմանը: Հարավային Կովկասի նկատմամբ Թուրքիան այդ ռազմավարությունը կիրառում է «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի հետ համատեղ՝ դրանով իսկ ամրապնդելով իր կապերն Ադրբեջանի հետ, ինչպես նշված է 2021թ-ի հունիսի Շուշիի հռչակագրում՝ միաժամանակ ձգտելով հասնել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը: Հայաստանի Սյունիքի մարզի տարածքով Ադրբեջանի հետ կապի հաստատումը Թուրքիան դիտարկում է որպես Հարավային Կովկասում իր քաղաքականության կարևոր գործոններից մեկը³:

«Թուրքիայի դարը» հայեցակարգի առանցքային տարրերն են ակտիվ դիվանագիտությունն աշխարհի գրեթե յուրաքանչյուր տարածաշրջանում, ինչպես նաև գլոբալ խնդիրների վրա ազդելու նպատակով Թուրքիայի՝ որպես թյուրքական ու մահմեդական աշխարհում և Հարավային Եվրոպայում ազդեցիկ տերության բազմակողմանի հնարավորությունների օգտագործումը: Այս նպատակներին հասնելու համար Թուրքիան զգալիորեն ընդլայնել է իր ներկայությունը արտերկրում՝ բացելով բազմաթիվ դիվանագիտական ներկայացուցչություններ, ընդլայնելով իր «TIKA» զարգացման գործակալության գործունեության շրջանակը և հիմնելով «Յունուս Էմրե» ինստիտուտը և «Մաարիֆ» հիմնադրամը⁴:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ևս մեկ ուղղություն է Գլոբալ Հարավում ազդեցություն ձեռք բերելը: 2024թ-ին Կազանում ԲՐԻԿՍ գագաթնաժողովի (ԲՐԻԿՍ-ը միջազգային կազմակերպություն է, որն անվանվել է իր սկզբնական անդամների՝ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Չինաստանի և Հարավային Աֆրիկայի հապավմամբ) նախօրեին Թուրքիան պաշտոնապես այդ կազմակերպությանն անդամակցելու հայտ է ներկայացրել՝ նպատակ ունենալով ամրապնդել իր գլոբալ ազդեցությունը և Նոր կապեր հաստատել իր ավանդական արևմտյան դաշնակիցների շրջանակից դուրս և նրանց հակառակ: Թուրքիայի նպատակն է ձեռք բերել զարգացման ֆինանսավորման այլընտրանքային հնարավորություններ Ջարգացման Նոր բանկի (New Development Bank) միջոցով, տեղական տարադրամով հաշվարկների միջոցով նվազեցնել գործարքի ծախսերը և խորացնել համագործակցությունը ենթակառուցվածքների, պաշտպանության, կանաչ էներգիայի և թվային տարադրության ոլորտներում⁵:

1. "The Century of Türkiye Is a Comprehensive Roadmap that Will Raise Our Country Above the Level of Contemporary Civilizations," Presidency of the Republic of Türkiye, May 31, 2023, accessed July 1, 2025, <https://www.iletisim.gov.tr/english/haberler/detay/the-century-of-turkiye-is-a-comprehensive-roadmap-that-will-raise-our-country-above-the-level-of-contemporary-civilizations>.
2. "National Foreign Policy in the 'Century of Türkiye': A Synopsis," Republic of Türkiye Ministry of Foreign Affairs, accessed July 1, 2025, <https://www.mfa.gov.tr/synopsis-of-the-turkish-foreign-policy.en.mfa>.
3. Hakan Fidan, "Turkish Foreign Policy at the Turn of the 'Century of Türkiye': Challenges, Vision, Objectives, and Transformation," Insight Turkey 25, No. 3 (2023): 11-24, accessed October 14, 2025, <https://www.insightturkey.com/commentary/turkish-foreign-at-the-turn-of-the-century-of-turkiye-challenges-vision-objectives-and-transformation>.
4. Muhittin Ataman, "The 'Century of Türkiye': A New Foreign Policy Vision for Building the Türkiye Axis," Insight Turkey 25, No. 3 (2023): 73-96, accessed October 14, 2025, <https://www.insightturkey.com/article/the-century-of-turkiye-a-new-foreign-policy-vision-for-building-the-turkiye-axis>.
5. Serhat Süha Çubukçuoğlu, "Türkiye and BRICS+: Strategic Ambitions in a Shifting Global Order," August 31, 2025, accessed October 10, 2025, <https://trendsresearch.org/insight/turkiye-and-brics-strategic-ambitions-in-a-shifting-global-order>.



Ուշագրավ է, որ սույն Նախագծի շրջանակներում հարցված որոշ փորձագետներ նշել են **Թուրքիայի աճող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հավակնությունների և, մյուս կողմից, Նրա ռեսուրսների ու հնարավորությունների միջև առկա անհամապատասխանությունը, ինչը վաղ թե ուշ կստիպի Անկարային չափավորել իր հավակնությունները և կարող է խաթարել «Թուրքիայի դարը» հայեցակարգի իրականացումը**: Նրանց կարծիքով ագրեսիվ արտաքին քաղաքականությունը կայուն չի լինի առանց ուժեղ ներքին ինստիտուտների և առողջ տնտեսության: Բոլոր կողմերի հետ խաղը կարող է հանգեցնել մեկուսացման, և փոխգործակցության ցանկացած հնարավորության օգտագործումը կարող է հանգեցնել այն երկրների գերլարմանը, որոնք պարզապես չունեն գերտերության ռեսուրսներ:

Թուրքիայի արտաքին քաղաքական այս հայեցակարգը չի կարող լիովին ընկալվել առանց վերջին տասնամյակում տեղի ունեցած ներքաղաքական վերափոխումների գնահատման: 2016թ-ին ռազմական հեղաշրջման անհաջող փորձից հետո Էրդողանի օրոք Թուրքիան վերածվել է մեծ լիազորություններով Նախագահ ունեցող հիերարխիկ պետության, որտեղ գրեթե բացակայում է զսպումների և հակակշիռների համակարգը: Այս զարգացումներն ուժեղացնում են Նախագահ Էրդողանի դերը արտաքին քաղաքականության ոլորտում՝ հաճախ ստիպելով Նրան միանձնյա որոշումներ կայացնել կարևոր հարցերի շուրջ, ինչպես նաև հետին պլան մղելով համապատասխան պետական կառույցների դերը, ինչպիսին է արտաքին գործերի Նախարարությունը⁶:

Այս գործոնները բարդացնում են վերլուծություններն ու իրավիճակի գնահատումը և պետք է հաշվի առնվեն Թուրքիայի արտաքին քաղաքականության ապագա հետազոծող որոշելիս:

6. M. Hakan Yavuz, *Erdoğan: The Making of an Autocrat* (Edinburgh: Edinburgh University Press, 2021), 230–257.



Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում. աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության փոխկապակցվածությունը

Հարավային Կովկասը Թուրքիայի համար ունի ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ աշխարհատնտեսական նշանակություն: Պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության հիմնական ասպեկտներն են տարածաշրջանի երկրների անկախության և ինքնիշխանության ամրապնդումը և եվրասիական տարածքային կառույցների հետ ինտեգրմանն ուղղված նրանց ջանքերի աջակցությունը՝ միաժամանակ պահպանելով և ամրապնդելով տարածաշրջանային համագործակցությունն ու քաղաքական ու տնտեսական կայունությունը⁷:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից **Հարավային Կովկասը ծառայում է Թուրքիայի և Ռուսաստանի միջև բուֆերային գոտի՝ կանխելով երկու երկրների միջև ընդհանուր ցամաքային սահմանի առկայությունը՝** իրավիճակ, որը, ըստ հարցվածներից մեկի, Թուրքիայի համար վատ է ավարտվել XVIII և XIX դարերում: Այն նաև թույլ է տալիս Թուրքիային կապ հաստատել Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետությունների հետ, ինչը կարևոր է այնտեղ իր ազդեցությունն ուժեղացնելու և թյուրքական աշխարհի զարգացմանը նպաստելու Անկարայի ձգտման համար⁸, ինչպես նախատեսված է թյուրքական պետությունների կազմակերպության կողմից 2021թ-ին ընդունված «Թյուրքական աշխարհի տեսլականը մինչև 2040թ-ը» փաստաթղթում⁹:

Աշխարհատնտեսական տեսանկյունից **Հարավային Կովկասը տարբեր մայրցամաքները կապող կարևոր տրանսպորտային և էներգետիկ հանգույց դառնալու ձգտող Թուրքիայի ռազմավարության կարևոր հենասյուն է:** Այս համատեքստում հաղորդակցման նախագծերը, ինչպիսիք են «Միջին միջանցքը» (Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի միջոցով Չինաստանը եվրոպային կապող տրանսպորտային երթուղի) և «Հարավային գազային միջանցքը» (Վրաստանի, Թուրքիայի և Ադրիատիկ ծովի միջոցով ադրբեջանական գազը եվրոպա հասցնող գազատարների ցանց), կարևոր դեր են խաղում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման գործում: Բացի այդ, Թուրքիան Կասպից ծովի ավազանի նավթը համաաշխարհային շուկաներ է մատակարարում տարածաշրջանից սկսվող և Թուրքիայի տարածքով անցնող խողովակաշարերի ցանցով: Հարավային Կովկասը կենսական դեր է խաղում ցանկացած նոր երթուղիներում, որոնք Թուրքիայի միջոցով Չինաստանը և Կենտրոնական Ասիան կապում են եվրոպային¹⁰: (Գոյություն ունի Իրանի միջոցով Կենտրոնական Ասիան Թուրքիայի հետ կապող այլընտրանքային երթուղի, սակայն, հաշվի առնելով թուրք-իրանական հարաբերությունների բարդ բնույթը, Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցները և Իրանի անկայուն վիճակից բխող սահմանափակումները, այդ երթուղին լիովին հուսալի չէ):

7. "Türkiye's Relations with Southern Caucasus Countries," Republic of Türkiye Ministry of Foreign Affairs, accessed July 5, 2025, https://www.mfa.gov.tr/turkiye_s-relations-with-southern-caucasus.en.mfa.
8. Mehmet Oğuzhan Tulun, "Türkiye's South Caucasus Policy and the West's Conflicting Approach," Avim Commentary, No. 2025/4, January 9, 2025, accessed October 10, 2025, <https://avim.org.tr/en/Yorum/TURKIYE-S-SOUTH-CAUCASUS-POLICY-AND-THE-WEST-S-CONFLICTING-APPROACH>.
9. "Turkic World Vision 2040," Organization of Turkic States, November 13, 2021, accessed September 22, 2025, <https://www.turkicstates.org/en/news/turkic-world-vision-2040>.
10. For more details on Türkiye's policy in the South Caucasus in recent decades, see Mustafa Aydın, "Turkey's Caucasus Policies, 2000-2022," Connections, The Quarterly Journal 22, No. 1 (2023): 79-90.



Վերջին տարիներին Հարավային Կովկասում Թուրքիայի աճող ներգրավվածությունը ընթացել է Հարավային Կովկասում Ռուսաստանի երբեմնի անվիճելի հեգեմոնիայի թուլացմանը (Ուկրաինայում պատերազմի պատճառով) գուզահեռ: Այս իրադարձությունները հանգեցրին ավելի մասնատված տարածաշրջանային կարգի ձևավորմանը երեք առանցքային դրսևորումներով՝ անհավասարակշիռ բազմաբևեռություն, համագործակցության և մրցակցության մոդելների փոփոխական բնույթ և Հարավային Կովկասի ու Մերձավոր Արևելքի միջև աճող փոխկապվածություն¹¹:

Սույն նախագծի շրջանակներում հարցված գրեթե բոլոր փորձագետները պնդել են, որ Թուրքիան նախնառաջ շահագրգռված է Հարավային Կովկասի երկրների անկախության պահպանմամբ՝ այն գնահատելով որպես տարածաշրջանի նկատմամբ Ռուսաստանի լիակատար վերահսկողության վերականգնումը կանխելու իրական միջոց: Լինելով Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) և Եվրոպական ավելի լայն քաղաքական համայնքի անդամ՝ Թուրքիան ձգտում է իրեն ներկայացնել որպես տարածաշրջանում Արևմուտքի շահերը պաշտպանող սուբյեկտ և քայլեր է ձեռնարկում, որպեսզի արևմտյան տերությունների մասնակցությունը տարածաշրջանում ամբողջությամբ չբացառվի: Սակայն իր երկակի ոճին համապատասխան Անկարան նաև բացահայտ կերպով դեմ է ԵՄ-ի հետ Հայաստանի աճող կապերին, ինչը դրսևորվեց նախագահ Էրդողանի վճռական դիմադրությամբ՝ 2024թ-ի ապրիլի 5-ին Եվրոպական հանձնաժողովի նախագահ ֆոն դեր Լայենի և ԱՄՆ պետքարտուղար Բլինքենի հետ Հայաստանի վարչապետ Փաշինյանի բարձր մակարդակի հանդիպմանը:

Թուրքիան նաև շահագրգռված է Հարավային Կովկասում կայունությամբ, քանի որ ցանկացած լուրջ ապակայունացում կխաթարի Նրա ձգտումը՝ դառնալ կարևոր տրանսպորտային ու էներգետիկ հանգույց և օգտագործել տարածաշրջանը Կենտրոնական Ասիա հասնելու համար: Նախագծի ընթացքում հարցված թուրք փորձագետները նշել են, որ Անկարան ներկայումս բախվում է բազմաթիվ արտաքին խնդիրների, այդ թվում՝ Սիրիայում և Գազայի հատվածում տեղի ունեցող իրադարձություններին, և Նրա սահմանների մոտ ցանկացած լրացուցիչ բարդություն վնաս կհասցնի Թուրքիայի տարածաշրջանային կեցվածքին:

11. Natalie Sebanadze, “How Russia, Turkey, and Iran Are Reshaping the Caucasus,” Chatham House, July 24, 2025, accessed July 30, 2025, <https://kalam.chathamhouse.org/articles/how-russia-turkey-and-iran-are-reshaping-the-caucasus/>.



Թուրքիան և Ռուսաստանը Հարավային Կովկասում. գործընկերներ, թե մրցակիցներ

Ռուսաստանի և Թուրքիայի երկկողմ հարաբերությունները բնութագրող ընդհանուր դիսամիկան հարաբերությունների տարբեր ուղղություններում տարանջատում պահպանելու միտումն է: Երկու երկրները մրցում կամ համագործակցում են տարբեր տարածաշրջաններում՝ կախված շահերի համընկնելուց կամ հակադրվելուց: Այս հայեցակարգն առաջին անգամ սկսեց կիրառվել Սիրիայում, որտեղ Ռուսաստանն ու Թուրքիան Իրանի հետ համատեղ 2017թ-ին հիմնեցին բանակցությունների Աստանայի ձևաչափը՝ երկրորդ պլան մղելով Արևմուտքի մասնակցությունն այդ գործընթացին: Համագործակցության/համաձայնեցման դիսամիկան դրսևորվեց նաև Լիբիայում, երբ Ռուսաստանն ու Թուրքիան աջակցում էին մրցակից խմբավորումներին՝ միաժամանակ ձգտելով չհատել միմյանց կարմիր գծերը¹²:

Տարանջատման պահպանումը ենթադրում է տնտեսության ու քաղաքականության ոլորտներում տարբեր համագործակցություն, քանի որ Ռուսաստանն ու Թուրքիան շարունակում են զարգացնել տնտեսական համագործակցությունը՝ մինևույն ժամանակ մրցակցելով քաղաքականության ոլորտում¹³: Տնտեսական համագործակցությունը մեծ նշանակություն ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի համար. այսպես, Թուրքիան կախված է Ռուսաստանի գազի և նավթի ներկրումից, իսկ Ռուսաստանի «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիան Թուրքիայում կառուցում է «Աքքուլու» ատոմակայանը: Reuters լրատվական գործակալության հաշվարկներով ռուսական նավթի և նավթամթերքների գեղջված ներմուծմամբ թուրքական ընկերությունները 2023թ-ին խնայել են մոտ 2 մլրդ դոլար, ինչը ցույց է տալիս Ռուսաստանի էներգետիկ կարևորությունը Թուրքիայի համար¹⁴: 2024թ-ի դեկտեմբերին Ուկրաինայի հետ Գազպրոմի տարանցման համաձայնագիր ավարտվելու արդյունքում Թուրքիայի տարածքով անցնող «Կապույտ հոսք» (բացվել է 2003թ-ի) և «Թուրքական հոսք» (բացվել է 2020թ-ի) խողովակաշարերը մնացել են ռուսական գազը դեպի ԵՄ արտահանելու վերջին գործող ուղիներ¹⁵: «Թուրքական հոսքով» դեպի Եվրոպա ռուսական գազի մատակարարումների ընդհանուր ծավալը 2025թ-ի առաջին կիսամյակում կազմել է մոտ 9,93 մլրդ խմ¹⁶:

Նախագծի շրջանակներում հարցված գրեթե բոլոր փորձագետները համակարծիք են, որ վերջին մի քանի տարիներին տարանջատման քաղաքականությունը ընդգրկել է նաև Հարավային Կովկասը, իսկ նախագծի շրջանակներում հարցված թուրք փորձագետներից մեկը Հարավային Կովկասում Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը բնութագրել է որպես միաժամանակ իրականացվող «պայքար և բանակցություն»:

12. Vicken Cheterian, "Friend and Foe: Russia-Turkey Relations Before and After the War in Ukraine," *Small Wars & Insurgencies* 34, No. 7 (2023): 1271-1294.

13. Robert Hamilton and Anna Mikulska, "Cooperation, Competition, and Compartmentalization: Russian-Turkish Relations and Their Implications for the West," *Foreign Policy Research Institute*, April 8, 2021, accessed October 10, 2025, <https://www.fpri.org/article/2021/04/cooperation-competition-and-compartmentalization-russian-turkish-relations-and-their-implications-for-the-west/>.

14. "Exclusive: Turkey Saves \$2 Billion on Russian Oil as Imports Soar Despite Sanctions," *Reuters*, December 18, 2023, accessed October 10, 2025, <https://www.reuters.com/business/energy/turkey-saves-2-blm-russian-oil-imports-soar-despite-sanctions-2023-12-18/>.

15. Alper Coşkun, Alexander Gabuev, Marc Pierini, Francesco Siccardi, and Temur Umarov, "Understanding Türkiye's Entanglement With Russia," *Carnegie Endowment for International Peace*, October 15, 2024, accessed October 10, 2025, <https://carnegieendowment.org/research/2024/10/understanding-turkiyes-entanglement-with-russia>.

16. "Russian Pipeline Gas Exports to Europe Rose 37% m/m in July, Data Shows," *Reuters*, August 1, 2025, accessed October 7, 2025, <https://www.reuters.com/business/energy/russian-pipeline-gas-exports-europe-rose-37-mm-july-data-shows-2025-08-01/>.



Հարցված որոշ փորձագետների կարծիքով վերջին երկու տասնամյակում Նախագահ Պուտինի և Նախագահ Էրդոհանի անձնական հարաբերությունները հանդիսանում են Հարավային Կովկասում և Նրա սահմաններից դուրս երկկողմ հարաբերությունների վրա ազդող ազդող ևս մեկ գործոն: Անձնական շփումները կարևոր դեր են խաղում երկկողմ հարաբերությունների ձևավորման գործում¹⁷ առաջնորդներին թույլ տալով գտնել լուծումներ բարդ խնդիրներին:

Որպես նման համաձայնեցման/համակերպման օրինակ փորձագետները նշել են 2020թ-ի Լեռնային Ղարաբաղի պատերազմը: **Թուրքիան մարտահրավեր նետեց Ռուսաստանին տարածաշրջանում՝ աջակցելով Ադրբեջանին ռազմական եղանակով փոխել status quo-ն, երբ Ադրբեջանը պարտության մատնեց Ռուսաստանի դաշնակից Հայաստանին: Սակայն կողմերին այդ ժամանակ հաջողվեց գտնել փոխընդունելի լուծում՝** Լեռնային Ղարաբաղում տեղակայելով ռուս խաղաղապահներ և հիմնելով ռուս-թուրքական համատեղ մոնիտորինգի կենտրոն¹⁸:

Փորձագետները տարանջատման հայեցակարգի շրջանակներում տարբերակել են Հարավային Կովկասում Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության տրամաբանական հիմնավորումը բացատրելու երկու եղանակ: Նրանց մեծամասնությունը պնդել է, որ Թուրքիան Ռուսաստանին դիտարկում է որպես «անխուսափելի չարիք», որը միշտ կհանդիսանա Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության մի մասը, և որ Անկարան շահագրգռված է Մոսկվայի հետ հարաբերությունների կարգավորմամբ, որոշ հարցերի **դեպքում** ռուս-թուրքական համատեղ վերահսկողության ստեղծմամբ և ԱՄՆ-ի ու ԵՄ-ի ներկայության ու ազդեցության, ինչպես նաև տարածաշրջանում ՆԱՏՕ-ի դերի զգալի կրճատմամբ: Դրանում նրանց ազգային շահերը համընկնում են¹⁹: Թուրքիան, ինչպես Ռուսաստանն ու Ադրբեջանը, քննադատել է 2024թ-ի ապրիլին Բրյուսելում կայացած Հայաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև բարձր մակարդակի հանդիպումը²⁰ և աջակցում է տարածաշրջանում «3+3» ձևաչափով խորհրդակցությունների մեխանիզմին, որի նպատակն է բացառել Արևմուտքը²¹:

Փորձագետների մի մասը հայտնել է, որ Թուրքիան ձգտում է օգուտ քաղել Ուկրաինայում պատերազմով Ռուսաստանի զբաղված լինելուց և հնարավորինս դուրս մղել Ռուսաստանին Հարավային Կովկասից՝ ստեղծելով «թուրքական Կովկաս» մի տարածաշրջան, որտեղ Թուրքիան կլինի ամենաազդեցիկ տերությունը: Քանի որ ԱՄՆ-ն ու Նրա եվրոպական դաշնակիցները նույնպես շահագրգռված են Ռուսաստանի մերձավոր արտասահմանում, այդ թվում՝ Հարավային Կովկասում, Մոսկվայի ազդեցության թուլացմամբ, տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացման շուրջ Արևմուտքի և Թուրքիայի շահերը կարող են համընկնել²²:

17. "Putin Says Erdoğan Always Keeps His Word Despite Differing Views," TASS, December 17, 2020, accessed October 10, 2025, <https://tass.com/politics/1236383>; Liz Cookman, "Putin and I Are the Only Significant World Leaders Left, Erdoğan says," The Telegraph, December 9, 2024, accessed October 10, 2025, <https://www.telegraph.co.uk/world-news/2024/12/09/erdogan-putin-two-leaders-turkish-backed-rebels-syria-town/>.

18. "Turkey, Russia Sign Agreement to Set up Joint Center for Nagorno-Karabakh," TASS, December 1, 2020, accessed October 10, 2025, <https://tass.com/world/1229873>.

19. Nikolas K. Gvozdev, "Russia's Assessment of Turkey's Policy in the South Caucasus: Implications for the EU," CATS Network Paper, No. 11, December 18, 2024.

20. "Türkiye Criticizes Armenia-US-EU talks without Azerbaijan," Hürriyet Daily News, April 7, 2024, accessed September 30, 2025, <https://www.hurriyetdailynews.com/turkiye-criticizes-armenia-us-eu-talks-without-azerbaijan-192240>.

21. "Türkiye to Host 3rd South Caucasus Regional Cooperation Platform," TRT World, October 17, 2024, accessed September 30, 2025, <https://www.trtworld.com/article/18221226>.

22. Jeffrey Mankoff, "Russia Is Losing Its Near Abroad: How America and Its European Allies Can Help Erode Moscow's Declining Influence," Foreign Affairs, July 24, 2025, accessed July 30, 2025, <https://www.foreignaffairs.com/russia/russia-losing-its-near-abroad>.



Այնուամենայնիվ, սույն նախագծի իրականացման ընթացքում հարցված բոլոր փորձագետները համակարծիք էին, որ Ռուսաստանն ու Թուրքիան մնում են տարածաշրջանի երկու ամենաազդեցիկ դերակատարները, և որ Հարավային Կովկասի ապագան հիմնականում կձևավորվի նրանց զարգացող հարաբերություններով:



Թուրքիան և Իրանը Հարավային Կովկասում. մրցակցություն, թե փոխադարձ վնասում

Նախագծի շրջանակներում հարցված որոշ փորձագետների կարծիքով Հարավային Կովկասը Թուրքիայի և Իրանի երկկողմ հարաբերություններում երկրորդական թատերաբեմ է՝ ելնելով Մերձավոր Արևելքի, հատկապես Սիրիայի հակամարտության, նրանց ռազմավարական շահերի համար կենսական կարևորությունից: 2020թ-ի Լեռնային Ղարաբաղի պատերազմը, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ռազմական գավառում և 2023թ-ին հայ բնակչության բռնի տեղահանումը անհանգստություն են առաջացրել Իրանում: Դա փոխեց ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում՝ ուժեղացնելով Թուրքիայի ազդեցությունը²³: Հարավային Կովկասից Ռուսաստանի ուշադրության շեղված լինելը մեծացրել է Իրանի մտահոգությունն²⁴ առ այն, որ Մոսկվան անտեսել է թուրքական ներխուժումը տարածաշրջան²⁵:

Սույն նախագծի շրջանակներում հարցված փորձագետների մեծամասնությունը հայտնել է, որ Հարավային Կովկասում Իրանի հիմնական նպատակն է կանխել տարածաշրջանում թուրքական ազդեցության հետագա ուժեղացումը, ինչը մասամբ բացատրում է այսպես կոչված «Հանգեզուրի միջանցքի» ստեղծման վերաբերյալ Թեհրանի վճռական առարկությունները²⁶: Իրանցի պաշտոնյաները թուրք-ադրբեջանական նախագիծն անվանում են «ՆԱՏՕ-ի և Թուրանի միջանցք»²⁷ և համարում են, որ դրա նպատակն է թուլացնել «դիմադրության առանցքը», խզել Իրանի կապը Կովկասի հետ և հաստատել Իրանի և Ռուսաստանի ցամաքային շրջափակում²⁸: 2025թ-ի օգոստոսին Վաշինգտոնում կայացած գագաթնաժողովից հետո Իրանի այս մտահոգությունները դեռևս շարունակվում են:

Հայ-իրանական սահմանի մոտակայքում ԱՄՆ-ի հնարավոր ներկայությունը և «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (TRIPP) նախագծի պայմաններում սահմանը հատելու բարդությունները Իրանի համար անհանգստության ևս մեկ աղբյուր են հանդիսանում²⁹:

Սիրիայում 2024թ-ին նախագահ Ասադի վարչակարգի փլուզումը, 2023-2025թթ-ին Իսրայելի՝ Հեզբոլլահի և ՀԱՄԱՍ-ի դեմ հաջող գործողությունները և իրանա-իսրայելական 12-օրյա պատերազմը Իրանի միջուկային օբյեկտներին ԱՄՆ-ի անմիջական ռազմական հարվածները, թուլացրին Իրանը:

23. Sergei Melkonian, "A New Balance in the South Caucasus: The Role of Iran," International Relations and Eurasia Studies (IRAS), April 2025, accessed July 20, 2025, <https://www.iras.ir/en/a-new-balance-in-the-south-caucasus-the-role-of-iran/>.

24. Hamidreza Azizi and Daria Isachenko, "Turkey-Iran Rivalry in the Changing Geopolitics of the South Caucasus," SWP Comment, No. 49, September 2023, accessed October 13, 2025, <https://www.swp-berlin.org/10.18449/2023C49/>.

25. Vali Golmohammadi and Sergey M. Markedonov, "How Iran Perceives Turkey's Rise in the South Caucasus," Russia in Global Affairs 22, No. 1 (2024): 152-175, doi: 10.31278/1810-6374-2024-22-1-152-175.

26. Siranush Ghazanchyan, "Iran's Khamenei Cautions Erdoğan Against Any Policy of Blocking the Border between Iran and Armenia," Public Radio of Armenia, July 19, 2022, accessed October 13, 2025, <https://en.armradio.am/2022/07/19/irans-khamenei-cautions-erdogan-against-any-policy-of-blocking-the-border-between-iran-and-armenia/>.

27. "Conspiracy of Creating 'NATO Turani Corridor' with Geopolitical Consequences against Iran, Russia and China," Supreme Council of the Cultural Revolution, September 11, 2022, accessed August 1, 2025, <https://www.scfr.ir/en/300/30101/146069/conspiracy-of-creating-nato-turani-corridor-with-geopolitical-consequences-against-iran-russia-and-china/>.

28. "Velayati: Zangezur Corridor a US Project Targeting Iran, Russia," Tasnim News Agency, July 27, 2025, accessed October 13, 2025, <https://www.tasnimnews.com/en/news/2025/07/27/3362760/velayati-zangezur-corridor-a-us-project-targeting-iran-russia>.

29. "Iran Opposes Presence of External Forces in Caucasus Region, Says Pezeshkian," IRNA (Islamic Republic News Agency), September 1, 2025, accessed September 2, 2025, <https://en.irna.ir/news/85928533/iran-opposes-presence-of-external-forces-in-caucasus-region>



Ձեկույցի շրջանակներում հարցված մի շարք փորձագետների կարծիքով այս նոր դասավորությունում Իրանը սահմանափակ հնարավորություններ ունի Թուրքիայի հետ Հարավային Կովկասում մրցակցելու համար, և Անկարան Թեհրանին չի դիտարկում որպես հզոր գործոն, որը կարող է խոչընդոտել տարածաշրջանում թուրքական ազդեցության զգալի ուժեղացմանը:

Այնուամենայնիվ, Թուրքիան նախկինի պես կարծում է, որ Իրանը կարող է Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում խոչընդոտ հանդիսանալ Թուրքիայի համար օրինակ, ձգտելով խաթարել քրդերի հետ ներկայումս ընթացող խաղաղ գործընթացը: Դա կարող է բացատրել, թե ինչու է Անկարան խուսափում Թեհրանի նկատմամբ չափազանց մեծ ճնշում գործադրելուց: Թուրքիան համարում է, որ տեսանելի ապագայում Իրանը կշարունակի ազդել տարածաշրջանային աշխարհաքաղաքականության վրա, բայց ավելի քիչ հնարավորություններով:

Թուրքիան նաև մտահոգված է, որ ներքուստ անկայուն Իրանը կարող է դառնալ Թուրքիա ժամանող միլիոնավոր փախստականների ևս մեկ ալիքի աղբյուր, ինչը կվտանգի բնական գազի արտահանումը և Իրանի հետ տնտեսական այլ կապերը³⁰: Կարևոր է նշել, որ նախագծի շրջանակներում հարցված իրանցի որոշ փորձագետների խոսքերով Մերձավոր Արևելքում ծախսողումների արդյունքում Իրանի համար մեծացել է Հարավային Կովկասի նշանակությունը: Նրանց կարծիքով Թեհրանը չի կարող հանդուրժել նոր պարտություն իր հարևանությամբ: Այս տեսանկյունից Իրանը զգալի ռեսուրսներ կհատկացնի Հարավային Կովկասին և վճռականորեն կպաշտպանի իր շահերը: Իրանի համար նույնպես ավելի հեշտ կլինի ցուցադրել իր հզորությունը Հարավային Կովկասում, որին այն ուղղակիորեն սահմանակից է ի տարբերություն Սիրիայի կամ Լիբանանի:

30. "Iran Exports nearly 9b Cubic Meters of Natural Gas in 2024," Tehran Times, July 7, 2025, accessed August 1, 2025, <https://www.tehrantimes.com/news/515318/iran-exports-nearly-9b-cubic-meters-of-natural-gas-in-2024>.



Թուրքիա և Ադրբեջան. «մեկ ազգ, երկու պետություն»

Ադրբեջանը Թուրքիայի ամենասերտ դաշնակիցն է Հարավային Կովկասում և, հնարավոր է, նաև ողջ աշխարհում, և Բաքվի հետ Անկարայի դաշինքը տարածաշրջանում վերջինիս քաղաքականության առանցքային հենասյունն է: Ադրբեջանի հետ Թուրքիայի ռազմավարական հարաբերությունները բազմակողմանի են, և նրանց հարաբերությունների շարժիչ ուժն են հանդիսանում բարձր մակարդակի հաճախակի շփումները³¹: Այդ հարաբերությունների հիմքում ընկած են էթնիկ, տնտեսական և ռազմական կապերը, ինչպես նաև լեզվական մտերմությունը, ինչն արտացոլված է 1990-ականներին նախագահ Յեյդար Ալինի կողմից հռչակած «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսում: Երկու կողմերն ամրապնդեցին իրենց գործընկերությունը 2010թ-ին ստորագրելով Ռազմավարական գործընկերության և փոխադարձ աջակցության համաձայնագիրը³², ինչպես նաև Ռազմավարական համագործակցության խորհրդի ստեղծման վերաբերյալ հռչակագիրը³³: Թուրքիան վճռորոշ դեր է խաղացել ադրբեջանական գիևուժի արդիականացման գործում՝ ոչ միայն սպառազինություն մատակարարելով, այլև վերապատրաստելով ադրբեջանցի գիևվորներին և սպաներին՝ դրանով իսկ աջակցելով խորհրդային ժառանգությունից ՆԱՏՕ-ի չափանիշներին անցնելուն, ինչը կարևոր դեր է խաղացել 2020թ-ին Լեռնային Ղարաբաղի պատերազմում Ադրբեջանի հաղթանակն ապահովելու գործում³⁴: Թուրքիան և Ադրբեջանն էլ ավելի ամրապնդեցին իրենց միությունը՝ 2021թ-ին ստորագրելով դաշնակցային հարաբերությունների մասին Նոր հռչակագիր՝ խորհրդանշական կերպով Լեռնային Ղարաբաղում³⁵:

Սույն զեկույցի շրջանակներում հարցված փորձագետներն ընդգծել են Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության համար Ադրբեջանի կարևորությունը, իսկ ոմանք այն անվանել են «Ադրբեջանն առաջինը» քաղաքականություն:

Նրանք նաև նշել են, որ ադրբեջանա-թուրքական կապերը պետք է դիտարկել ոչ թե «ավագ եղբայր-կրտսեր եղբայր» հայեցակարգի տեսանկյունից, այլ ավելի շուտ բազմաթիվ ոլորտներում ուժեղ փոխկախվածության համատեքստում՝ քաղաքականից մինչև սոցիալական և տնտեսական: Կարևոր է նշել, որ Ադրբեջանն ունի Թուրքիայի վրա ազդելու իր լծակները, այդ թվում՝ բնական գազի զգալի մատակարարումները (ԹՀ էներգակիրների շուկայի կառավարման մարմնի՝ EPDK-ի տվյալներով, Ադրբեջանը տարեկան կտրվածքով 11,9% - ով ավելացրել է գազի արտահանումը Թուրքիա՝ 2024թ-ին այն հասցնելով մոտ 11,478 մլրդ խմ)³⁶, ավելացրել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը (Թուրքիայում Ադրբեջանի ներդրումները կազմում են ավելի քան 20 մլրդ ԱՄՆ դոլար) և մասնակցությունը Թուրքիայի ներքին քաղաքականությունում՝ լրատվամիջոցների սկատմամբ ազդեցության ուժեղացմամբ:

31. "Relations between Türkiye and Azerbaijan," Republic of Türkiye Ministry of Foreign Affairs. accessed August 7, 2025, <https://www.mfa.gov.tr/relations-between-turkiye-and-azerbaijan.en.mfa>.
32. "Azerbaijan, Turkey Sign Document on Strategic Partnership and Mutual Support," AZERTAC, August 16, 2010, accessed October 13, 2025, https://azertag.az/en/xeber/azerbaijan_turkey_sign_document_on_strategic_partnership_and_mutual_support-594895.
33. "Declaration on the Establishment of the Council on Strategic Cooperation between Azerbaijan and Turkey Has Been Signed," Official Website of the President of the Republic of Azerbaijan, September 15, 2010, accessed September 22, 2025, <https://president.az/en/articles/view/721>.
34. For details on Azerbaijan-Türkiye military cooperation, see Levon Hovsepyan and Artyom A. Tonoyan, "From Alliance to 'Soft Conquest': The Anatomy of the Turkish-Azerbaijani Military Alliance before and after the 2020 Nagorno-Karabakh War," Small Wars & Insurgencies 35, No. 4 (2024): 622-655, <https://doi.org/10.1080/09592318.2024.2312957>.
35. "Shusha Declaration on Allied Relations between the Republic of Azerbaijan and the Republic of Turkey," Official Website of the President of the Republic of Azerbaijan, June 16, 2021, accessed August 18, 2025, <https://president.az/en/articles/view/52122>.
36. "Azerbaijan Boosts Gas Supplies to Turkey 1.9% to nearly 4.8 bcm in January-May," Interfax, July 28, 2025, accessed October 13, 2025, <https://interfax.com/newsroom/top-stories/112920/>.



Այսպես, 2023թ-ին Թուրքիայում վճռորոշ նախագահական ընտրությունների առաջին փուլում երրորդ տեղը զբաղեցրած թեկնածու, Էթնիկ ադրբեջանցի Սինան Օհանը օգնել է Էրդողանին՝ աջակցելով նրան երկրորդ փուլից առաջ³⁷: Նշենք, որ Սինան Օհանը նախկինում հանդիսացել է Բաքվում Թուրքական համագործակցության և համակարգման գործակալության ներկայացուցիչ և իր ավանդի համար պետական պարգև է ստացել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևից³⁸:

Թուրքական պետությունների կազմակերպության շրջանակներում համագործակցությունը հանդիսանում է Ադրբեջանն ու Թուրքիան կապող ևս մեկ հանգույց, քանի որ թյուրքալեզու պետությունների հետ կապերի ամրապնդումը վերջին տարիներին դարձել է Ադրբեջանի արտաքին քաղաքականության կարևոր հենասյուներից մեկը³⁹, և նախագահ Էրդողանն, իր հերթին, շեշտում է թյուրքական միասնության կարևորությունը Թուրքիայի համար⁴⁰:

Նախագծի շրջանակներում հարցված փորձագետները երկու տարբեր տեսակետ են հայտնել թյուրք-ադրբեջանական հարաբերությունների ներկա վիճակի վերաբերյալ: Մի խումբ նշում է երկկողմ հարաբերություններում էական խնդիրների բացակայության մասին, քանի որ դրանց հիմքում ընկած է երկու առաջնորդների ընդհանուր շահերը և անձնական փոխվստահությունը: Երկրորդ խումբը մատնանշել է թյուրքական վերին վեկավար օղակներում, հատկապես Թուրքիայի արտաքին գործերի նախարարության ղեկավարության շրջանում, աճող լարվածությունն ու դժգոհությունը: Նրանք հիշատակել են Ադրբեջանի և Իսրայելի միջև աճող գործընկերությունը, ինչպես նաև Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների վերաբերյալ Ադրբեջանի «վետոյի իրավունքը»: Այնուամենայնիվ, ադրբեջանա-թյուրքական գործընկերության վրա ադրբեջանա-իսրայելական հարաբերությունների ազդեցության վերաբերյալ փորձագետների կարծիքները տարբերվում են: Ոմանք ընդգծել են, որ ադրբեջանա-իսրայելական ռազմավարական գործընկերությունը ձեռնառու է Թուրքիային, քանի որ Անկարային տրամադրում է Իսրայելի հետ դիվանագիտական պահեստային փակ խողովակներ՝ որպես օրինակ բերելով Բաքվում կայացած վերջին հանդիպումները⁴¹:

Այնուամենայնիվ, բոլոր փորձագետները, անկախ Ադրբեջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների ներկա փուլի վերաբերյալ իրենց տեսակետներից, նշել են, որ **Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերությունը կմնա Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության անկյունաքարը, և Թուրքիան ձեռնպահ կմնա ցանկացած քայլից, որը կարող է խաթարել այն՝ նույնիսկ Բաքվի քայլերից Անկարայի դժգոհության դեպքում:**

37. Ariel Korgan, "Sinan Ogan, Turkey's Third Candidate with Azerbaijani roots," i24NEWS, May 19, 2023, accessed October 13, 2025, <https://www.i24news.tv/en/news/analysis-opinion/1684503786-sinan-ogan-turkey-s-third-candidate-with-azerbaijani-roots>.
38. "Turkish Presidential Candidate Claims to Support Erdoğan, in Second Round of Election," Turkic World, May 22, 2023, accessed October 13, 2025, <https://turkic.world/en/articles/turkiye/102795>.
39. "Azerbaijan's President Stresses Unity of Turkic World," AA, June 7, 2024, accessed September 30, 2025, <https://www.aa.com.tr/en/turkiye/azerbaijans-president-stresses-unity-of-turkic-world/324265>.
40. "Erdoğan Rallies Turkic States for More Solidarity in New World Order," Daily Sabah, May 21, 2025, accessed October 13, 2025, <https://www.dailysabah.com/politics/diplomacy/erdogan-rallies-turkic-states-for-more-solidarity-in-new-world-order>.
41. "Türkiye, Israel Meet in Azerbaijan to Prevent Syria Conflict," Daily Sabah, April 10, 2025, accessed October 13, 2025, <https://www.dailysabah.com/politics/turkiye-israel-meet-in-azerbaijan-to-prevent-syria-conflict/news>; "Turkey, Israel to Hold Second Round of Talks in Baku to Prevent Clashes in Syria," Turkish Minute, May 8, 2025, accessed October 13, 2025, <https://turkishminute.com/2025/05/08/turkey-israel-to-hold-second-round-of-talks-in-baku-to-prevent-clashes-in-syria/>.



Թուրքիան և Վրաստանը. աշխարհատնտեսությունը գործողության մեջ

Նախագծի շրջանակներում հարցված գրեթե բոլոր փորձագետներն ընդգծել են Վրաստանի կարևոր դերը Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության սահմանման գործում՝ նշելով, որ այն ծառայում է որպես տարանցիկ ուղի Ադրբեջանի և Թուրքիայի կապի համար, ինչպես նաև Ռուսաստանից բաժանող բուժեր: 2012թ-ին մեկնարկած Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ գործընկերությունն էլ ավելի ամրապնդեց Վրաստանի՝ որպես կապող օղակի դերը Թուրքիայի և Ադրբեջանի միջև և ուժեղացրեց Թուրքիայի ազդեցությունը երկրի ներսում: Բացի այդ, Վրաստանով են անցնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերը, որոնցից վերջինը Հարավային գազային միջանցքի մաս է հանդիսանում, ինչպես նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը: Այս ամենը ընդգծում է Վրաստանի կարևորությունը՝ տարանցիկ և էներգետիկ հանգույց դառնալու հավակնություններ ունեցող Թուրքիայի աճող ջանքերում:

Թուրք-վրացական հարաբերությունները զարգանում են երեք հիմնական ոլորտներում՝ տնտեսության, պաշտպանության և մշակույթի/փափուկ ուժի: 2024թ-ին Թուրքիան հանդիսանում էր Վրաստանի խոշորագույն առևտրային գործընկերը (շրջանառությունը կազմել է 3,228 մլրդ դոլար)⁴²: Պաշտպանական ոլորտում Թուրքիայի և Վրաստանի համագործակցությունը զարգանում է երկկողմ մակարդակով և Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան գործընկերության շրջանակներում⁴³: Վրաստանի ավիացիայի և հակաօդային պաշտպանության հրամանատարությունը 2022թ-ի դեկտեմբերին Թուրքիայից անվճար ստացել է երկու լրակազմ օդակայանի մասնագիտացված սարքավորում և UH-1H Huey ուղղաթիռների պահեստամասեր⁴⁴: Թուրքիայի հետ համաձայնագրի շրջանակներում Վրաստանի պաշտպանության ուժերը 2024թ-ին ստացել են ՆԱՏՕ-ի չափանիշներով արտադրված VURAN տեսակի նոր գրահափոխադրիչներ⁴⁵: Անկարան Վրաստանում կիրառում է նաև փափուկ ուժի գործիքներ: 2000 թվականից TIKA-ն իրականացնում է Թուրքազիտություն նախագիծը, որի շրջանակներում վրացական համալսարաններում ստեղծվել են թուրքազիտության ամբիոններ՝ այս թեմայով հետազոտությունները ընդլայնելու և Թուրքիայի նկատմամբ վրաց բնակչության հետաքրքրությունը մեծացնելու նպատակով: Յուրուս Էմրեի անվան թուրքական մշակույթի կենտրոնը զբաղվում է Վրաստանում թուրքական մշակույթի և լեզվի հանրայնացմամբ⁴⁶:

Թեև Թուրքիան շարունակում է մնալ Վրաստանի կարևորագույն գործընկերներից մեկը, Վրաստանի հասարակության մի մասը մտահոգված է թուրքական ազդեցության մակարդակով:

42. "External Merchandise Trade of Georgia, 2024 (Preliminary)," National Statistics Office of Georgia, January 20, 2025, accessed August 20, 2025, <https://www.geostat.ge/media/67898/External-Merchandise-Trade-of-Georgia-in-2024.pdf>.
43. "Georgia, Azerbaijan, Turkey Hold Regular Command and Post Drills," Civil.ge, October 11, 2023, accessed October 13, 2025, <https://civil.ge/archives/562724>.
44. "Turkey Donates UH-1H Spare Parts, Equipment to Georgia," ITV, December 18, 2022, accessed October 13, 2025, <https://itv.ge/lang/en/news/turkey-donates-uh-1h-spare-parts-equipment-to-georgia/>.
45. "Georgia Receives NATO-Standard Armored Personnel Carriers from Turkey," Civil.ge, June 12, 2024, accessed October 13, 2025, <https://civil.ge/archives/612500>.
46. For details, see Rashid T. Mamedov, "'Soft Power' as a Part of Turkish Foreign Policy in Georgia," Vestnik RUDN, International Relations 23, No. 4 (2023): 734-747, accessed October 13, 2025, <https://journals.rudn.ru/international-relations/article/view/37259>.



Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից 2023թ-ի նոյեմբերին հրապարակված հարցումների համաձայն՝ վրացիների 28%-ը Թուրքիան համարում է Վրաստանի ամենակարևոր տնտեսական գործընկերը, իսկ 16%-ը՝ ամենակարևոր քաղաքական գործընկերը: Դրան զուգահեռ՝ հարցվածների 12%-ը Թուրքիան համարում է Վրաստանի համար ամենամեծ քաղաքական սպառնալիք⁴⁷: Վրաստանի սևծովյան ափին գտնվող Աջարիայի ինքնավար հանրապետությունում մահմեդական տարրի առկայությունը, որը կազմում է Աջարիայի բնակչության մոտ 40%-ը⁴⁸, ինչպես նաև Ադրբեջանի հետ սահմանակից շրջաններում բնակվող ադրբեջանական փոքրամասնությունը ևս մեկ գործոն է, որը նպաստում է Վրաստանում Թուրքիայի ազդեցությանը⁴⁹: Աբխազական սփյուռքի առկայությունը Թուրքիայում նույնպես որոշակի դեր է խաղում թուրք-վրացական հարաբերություններում: 2011թ-ին Թուրքիա է այցելել Աբխազիայի de facto նախագահը⁵⁰, իսկ 2023 թ-ին՝ de facto արտգործնախարարը⁵¹: Նախագծի շրջանակներում հարցված փորձագետների կարծիքով, մինչդեռ վրացական կառավարության մի մասը մտահոգված է Թուրքիայի և Աբխազիայի շփումներով, այլոք Թուրքիան դիտարկում են որպես այդ երկրում ռուսական ազդեցությունը հավասարակշռելու հնարավոր միջոց: Այնուամենայնիվ, Անկարան հետևողականորեն հանդես է գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության օգտին՝ ձգտելով խուսափել Վրաստանի հետ հարաբերությունների խաթարումից:

47. "Georgia Poll Shows Political Threat from Russia, Concerns with the Presence of Russian Citizens, High Political Polarization," IRI, November 15, 2023, accessed September 30, 2025, <https://www.iri.org/resources/georgian-survey-of-public-opinion-september-october-2023/>

48. "Georgian Muslims Demand Recognition," Institute for War & Peace Reporting, September 16, 2016, accessed October 13, 2025, <https://iwpr.net/global-voices/georgian-muslims-demand-recognition>

49. According to the 2014 census, the number of Azerbaijanis in Georgia was 233,000, see "Geostat Releases Final Results of 2014 Census," Civil.ge, April 28, 2016, accessed October 13, 2025, <https://civil.ge/archives/124561>. The data for the 2024 census will be published in 2026.

50. "President Sergey Bagapsh visits Turkey," Abkhaz World, April 7, 2011, accessed October 13, 2025, <https://abkhazworld.com/aw/diaspora/158-president-sergey-bagapsh-visits-turkey>

51. "Inal Ardzinba Visits Turkey," Civil.ge, June 30, 2023, accessed October 13, 2025, <https://civil.ge/archives/550077>



Թուրքիա և Հայաստան. վաղեմի հակառակորդներ և հուսադրող հարևաններ

Հայաստանը Հարավային Կովկասի միակ երկիրն է, որի հետ Թուրքիան չունի դիվանագիտական հարաբերություններ և բաց սահմաններ: Երկկողմ հարաբերությունները սերտորեն կապված են հայ-ադրբեջանական հակամարտության և թուրք-ադրբեջանական դաշինքի հետ: Թուրքիան հակամարտության առաջին իսկ օրերից աջակցել է Ադրբեջանին դիվանագիտական, տնտեսական և պաշտպանական միջոցներով՝ միաժամանակ կարևոր դեր խաղալով Հայաստանի մեկուսացման և ցանկացած տարածաշրջանային նախագծերից նրան բացառելու Ադրբեջանի ռազմավարությունում: Ինչպես ավելի վաղ ասվել էր, հարցվածների համաձայն՝ **Թուրքիայի «Ադրբեջանն առաջինը» քաղաքականությունը կենտրոնական դեր է խաղում Հարավային Կովկասում նրա հետագիծը որոշելիս, և Անկարան Հայաստանի հետ հարաբերություններում որևէ քայլ չի ձեռնարկի, որը կարող է խաթարել Բաքվի հետ Անկարայի դաշինքը:**

Վերջին տարիներին տարածաշրջանային աշխարհաքաղաքականության զգալի փոփոխությունները նոր հնարավորություններ են ստեղծել Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման համար: 2020թ-ին Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ է եղել Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված «խաղաղության օրակարգի» քաղաքականության իրականացմանը: Մինևույն ժամանակ, 2020թ-ին Լեռնային Ղարաբաղի պատերազմում Ադրբեջանի հաղթանակը և «ադրբեջանական հողերի դեօկուպացիան», ըստ Անկարայի, ճանապարհ հարթեցին հարաբերությունների կարգավորման շուրջ բանակցությունների վերսկսման համար: Բանակցությունները պաշտոնապես վերսկսվեցին 2022թ-ին և նույն թվականի հուլիսին Թուրքիան և Հայաստանը պայմանավորվեցին թույլ տալ երրորդ երկրների քաղաքացիներին հատել իրենց ընդհանուր ցամաքային սահմանը, ինչպես նաև սկսել Հայաստանի և Թուրքիայի միջև օդային ուղղակի բեռնափոխադրումներ⁵²: Այնուամենայնիվ, չնայած այդ ժամանակից ի վեր բանակցություններում բազմաթիվ զարգացումներին և դրական ժեստերին ու առաջընթացի վերաբերյալ հայտարարություններին, մինչ այժմ շոշափելի արդյունքներ չեն գրանցվել, և 2022թ-ի հուլիսին ստորագրված համաձայնագիրը դեռ չի իրագործվել: **Նախագծի շրջանակներում հարցված բոլոր փորձագետների կարծիքով որևէ առաջընթացի բացակայության հիմնական պատճառն է Թուրքիայի նկատմամբ Ադրբեջանի դիրքորոշումը, որը պահանջում է հայ-թուրքական ուղղությամբ ցանկացած քայլ՝ ներառյալ սահմանի բացումը, ձեռնարկել միայն հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո:**

Դա հակասում է օգոստոսի 8-ի վաշինգտոնյան գագաթնաժողովից հետո ձևավորված այն հիմնարար ըմբռնմանը, որ Ադրբեջանը կբավարարվի TRIPP-ի միջոցով Հայաստանի հետ կապի մասնակի բացմամբ՝ առանց հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի ստորագրման: Արդյունքում ստացվում է, որ մինչև Ադրբեջանն ընդունում է Հայաստանի և Ադրբեջանի միջև հաղորդակցությունների վերականգնման սկզբունքը՝ առանց խաղաղության համաձայնագրի կնքման, Թուրքիայի դիրքորոշումն անփոփոխ է. հայ-թուրքական սահմանը կարող է բացվել միայն հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո:

52. "Armenia, Turkey Agree on the Issues of Land Border Crossing and Direct Air Cargo Transportation," Armenpress, July 1, 2022, accessed October 13, 2025, <https://armenpress.am/en/article/1087402>.



Այս անհամապատասխանությունն ընդգծում է այն փաստը, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ Թուրքիայի հնարավոր շահագրգռվածությունը չի կարող գործել ի վնաս Ադրբեջանի հետ հարաբերություններին: Այլ կերպ ասած, Թուրքիան կարծում է, որ Ադրբեջանի հետ իր սերտ միության շահերը (օրինակ՝ մուտքը Կենտրոնական Ասիայի թյուրքական հանրապետություններ և Թուրքիայի վերածումը Չինաստանն ու Կենտրոնական Ասիան Եվրոպային կապող հիմնական էներգետիկ և տրանսպորտային հանգույցի, ինչպես նաև երկկողմ տնտեսական և ներդրումային հնարավորությունները) գերազանցում են Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումից ակնկալվող ձեռքբերումները (օրինակ՝ Արևմուտքում իր իմիջի բարելավում, Հայաստանում տնտեսական և, հնարավոր է, քաղաքական ազդեցության ձեռքբերում, Ռուսաստանից Հայաստանի կախվածության նվազում, և Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության թուլացում):

Հարկ է նշել, որ Նախագծի շրջանակներում հարցված որոշ թուրք փորձագետներ նշել են, որ Թուրքիայի համար Հայաստանից գլխավոր շահն է Սյունիքի մարզով դեպի Ադրբեջան ցամաքային կապի՝ այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» ստեղծումը, ինչը երկրորդական պլան է մղում Հայաստանի հետ սահմանի բացման օգուտը: Սա նշանակում է, որ եթե Սյունիքի մարզով Ադրբեջանից դեպի Նախիջևան, որից հետո անմիջապես Թուրքիա ցամաքային մուտք ապահովվի, Թուրքիան կարող է կորցնել Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման և սահմանների բացման իր մոտիվացիան:

Թուրքիան ողջունել է օգոստոսի 8-ին Վաշինգտոնյան հռչակագրի ստորագրումը և Հայաստանի ու Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագրի նախաստորագրումը⁵³: Սակայն, որոշ թուրք փորձագետների կարծիքով, Վաշինգտոնի գազաթափոցվին նախագահ Էրդոհանի բացակայությունը և նախագահ Ալիևի ու նախագահ Թրամփի միջև ուղիղ շփումների հաստատումը, ինչը որպես միջնորդ երկրորդ պլան մղեց Էրդոհանին, կարող էր նյարդայնացնել թուրք առաջնորդին՝ հետագա լարվածություն ստեղծելով թուրք-ադրբեջանական հարաբերություններում: Այնուամենայնիվ, 2025թ-ի սեպտեմբերին Սպիտակ տանը Էրդոհանի և Թրամփի հանդիպումը կարծես թե մեղմացրեց Թուրքիայի հետին պլան մղված լինելու ընկալումը⁵⁴, հնարավոր է, հանգեցնելով TRIPP-ի իրականացման հարցում Թուրքիայի աջակցության ուժեղացմանը:

Վաշինգտոնի գազաթափոցվի ազդեցությունը Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա ակնհայտ կդառնա առաջիկա ամիսներին: Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչների՝ Ռուբեն Ռուբինյանի և Սերդար Քըրըչի միջև 2025թ-ի սեպտեմբերին Երևանում տեղի ունեցած բանակցություններն, ամենայն հավանականությամբ, որևէ բեկման չեն հանգեցրել, և պետք է սպասել հետագա բանակցությունների⁵⁵:

53. "No. 167, 8 August 2025, Regarding the Peace Process Between Azerbaijan and Armenia," Republic of Türkiye Ministry of Foreign Affairs, August 8, 2025, accessed September 22, 2025, [https://www.mfa.gov.tr/no_-167_-azerbaycan-ve-ermenistan-arasindaki-baris-sureci-hk.en.mfa#:~:text=No%3A%20167%2C%208%20August%202025,Türkiye%20Ministry%20of%20Foreign%20Affairs&text=We%20welcome%20the%20progress%20achieved,8%20August\)%20in%20this%20regard.](https://www.mfa.gov.tr/no_-167_-azerbaycan-ve-ermenistan-arasindaki-baris-sureci-hk.en.mfa#:~:text=No%3A%20167%2C%208%20August%202025,Türkiye%20Ministry%20of%20Foreign%20Affairs&text=We%20welcome%20the%20progress%20achieved,8%20August)%20in%20this%20regard.)
54. "President Trump Welcomes Turkish President to White House," C-SPAN, September 25, 2025, accessed September 30, 2025, <https://www.c-span.org/program/white-house-event/president-trump-welcomes-turkish-president-to-white-house/666244.>
55. "Sixth Meeting of the Special Representatives of Armenia and Türkiye," Ministry of Foreign Affairs of Armenia, September 12, 2025, accessed September 30, 2025, https://www.mfa.am/en/press-releases/2025/09/12/Armenia_Turkiye/13439.



Կարելի է Թուրքիայի կողմից ակնկալել շոշափելի ժեստի, օրինակ 2022թ-ի հուլիսին ստորագրված համաձայնագրի կատարումը⁵⁶: Սակայն Անկարան կարող է նաև շարունակել հավատարիմ մնալ Բաքվի միևնույն-վաշինգտոնյան դիրքորոշմանը և արգելակել կարգավորման գործընթացը, որպեսզի Երևանին ստիպի համաձայնել Բաքվի լրացուցիչ պահանջներին, ինչպիսիք են TRIPP-ի պայմանների վերաբերյալ նրա ակնկալիքների ընդունումը կամ այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջանի» հայեցակարգի շրջանակներում Հայաստանում ադրբեջանցիների բնակեցումը:

Չնայած պետական մակարդակով շոշափելի արդյունքների բացակայությանը՝ կարգավորման գործընթացն ազդել է հայերի կողմից Թուրքիայի ընկալման վրա՝ ընդգծելով քաղաքական ակտիվության և հասարակության պատրաստակամության միջև առկա անջրպետը (նկ. 1)⁵⁷:



Տվյալները ընդգծում են մի պարադոքս. նույնիսկ այն դեպքում, երբ հայերի ավելի մեծ մասը թուրքերի նկատմամբ ունի բացասական կարծիք, քան թուրքերը՝ հայերի նկատմամբ, հայերի զգալիորեն ավելի մեծ մասն է հավանություն տալիս սահմանի բացմանը (նկ. 2)⁵⁸:


56. "The Washington Summit: Implications for Armenia and the Region," APRI Armenia, August 14, 2025, accessed August 15, 2025, <https://apri.institute/the-washington-summit-implications-for-armenia-and-the-region/>.

57. "Public Opinion Survey: Residents of Armenia | June 2025," International Republican Institute, July 21, 2025, accessed October 13, 2025, <https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2025/>.

58. Caucasus Research Resource Center-Armenia Foundation & KONDA Research and Consultancy Company, Insights Beyond Borders: Turkey-Armenia Relations Through Public Eyes, Analytical Report (Istanbul: Hrant Dink Foundation Publications, 2024, <https://hrantdink.org/en/activities/projects/turkey-armenia-relations-programme/4276-insights-beyond-borders-turkey-armenia-relations-through-public-eyes>.



Նկ. 2 Հայերի և թուրքերի վերաբերմունքը միմյանց նկատմամբ (հարցվածների տոկոսը, 2024թ)



Աղբյուր՝ Զեռագոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՅՌԿԿ)
- Հայաստան հիմնադրամ և Konda Research and Consultancy

Մինչ Հայաստանը շարունակում է բանակցություններն Ադրբեջանի հետ⁵⁹ և ձգտում է դիվերսիֆիկացնել իր արտաքին քաղաքականությունը լիակատար չօտարելով Ռուսաստանին և շարունակելով Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ նույնիսկ առանց շոշափելի արդյունքների, վերը նշվածը ստեղծում է դրական տարածաշրջանային միջավայր և նվազեցնում Ադրբեջանի կողմից նոր ռազմական էսկալացիայի ռիսկը: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու սահմանի ամբողջական բացումը կարող է լրացուցիչ ճկունություն տրամադրել Հայաստանի արտաքին քաղաքականությանը և օգնել Թուրքիային ուժեղացնել իր ազդեցությունը տարածաշրջանում: Ակնկալվում է, որ Թուրքիայի հետ սահմանի բացումը տևտեսական տեսանկյունից կնպաստի ԵՄ-ի հետ Հայաստանի առևտրի ծավալի աճին⁶⁰ և կնվազեցնի Հայաստանի կախվածությունը Վրաստանի և Իրանի տարածքով տարանցիկ ուղիներից: Եթե տարածաշրջանային հաղորդակցության ուղիներ հաստատվեն առանց հայ-թուրքական սահմանի բացման, Հայաստանը քիչ բան (եթե ընդհանրապես ինչ-որ բան) կշահի, և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունների պատուհանը, ամենայն հավանականությամբ, կփակվի:

59. For details on the Armenia-Azerbaijan negotiation process before the Washington Summit, see Benyamin Poghosyan, "Armenia and Azerbaijan in 2025: Peace, War or Continuation of the Status Quo?," in Rusif Huseynov, Benyamin Poghosyan, and Hugo von Essen, How Close Is Peace Between Armenia and Azerbaijan?, SCEEUS Report No. 5 (2025), April 17, 2025, accessed October 13, 2025, https://sceeus.se/en/publications/how-close-is-peace-between-armenia-and-azerbaijan/?filter=gt_kb_cat%3Dquest-report-2.

60. Veronika Movchan, Ricardo Giucci, and Emily Haentschel, Opening of Common Border between Armenia and Turkey: Impact on Armenian Trade, June 2022, https://www.german-economic-team.com/wp-content/uploads/2022/06/GET_ARM_PB_07_2022.pdf.



Տեսանելի ապագայում Թուրքիան կմնա Հարավային Կովկասում ազդեցիկ տերություններից մեկը, և Անկարայի տարածաշրջանային քաղաքականությունը նախկինի պես կթելադրվի «Ադրբեջանն առաջինը» քաղաքականությամբ: Հայաստանը պետք է հաշվի առնի այս փաստը և ձգտի միաժամանակ առաջ շարժվել Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացներում, որպեսզի խուսափի այն իրավիճակից, երբ Թուրքիան պահպանում է status quo-ն Հայաստանի հետ հարաբերություններում՝ միաժամանակ զիջումներ կորզելով Հայաստանից Ադրբեջանի հետ հարաբերություններում:



Եզրակացություն

Հարավային Կովկասը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում ավելի մեծ դեր ունի, քան սովորաբար համարվում է: Անկարայի քաղաքականությունը պայմանավորված է նրա «Ադրբեջանն առաջինը» քաղաքականությամբ և Ասիան Եվրոպային կապող հիմնական էներգետիկ և տրանսպորտային հանգույց դառնալու ձգտմամբ, ինչը, ըստ նրա, լավագույնս ապահովվում է Ադրբեջանի միջոցով՝ հնարավորություն ընձեռելով մուտք գործել Կենտրոնական Ասիայի թյուրքական պետություններ: Թուրքիայի քաղաքականությունը տարածաշրջանում հիմնված է Ադրբեջանի հետ ռազմավարական դաշինքի վրա և կմնա այդպիսին: Արդյունքում՝ Նախիջևանի ադրբեջանական էքսկլավի և Սյունիքի հայկական տարածաշրջանի միջոցով Թուրքիայի և Ադրբեջանի միջև լրացուցիչ տրանսպորտային հաղորդակցության ստեղծումը շարունակում է մնալ առաջնահերթ խնդիր:

Կարևոր է նշել, որ Թուրքիան, կարծես թե, օգուտ չի տեսնում Հայաստանի հետ ընդհանուր սահմանի բացումից՝ այն դիտարկելով բացառապես «Ձանգեզուրի միջանցքի» տեսանկյունից: Այս ռազմավարության մի մասն է Կարս-Գյումրի-Երևան-Երասխ-Նախիջևան երկաթգծի շրջանցմամբ Կարս-Իզմիր-Նախիջևան երկաթուղու կառուցման մեկնարկը:

Թուրքիան շահագրգռված է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ, քանի որ դա Անկարային թույլ կտա ընդլայնել իր ներկայությունը տարածաշրջանում, սակայն Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար Թուրքիան չի վտանգի իր հարաբերությունները Ադրբեջանի հետ: Այնուամենայնիվ, Անկարայի ռազմավարական հավակնությունները՝ տնտեսական ինտեգրումը, բազմակողմ կապերի ընդլայնումը և փափուկ ուժի տարածումը, պահանջում են ավելի անմիջական փոխգործակցություն Հայաստանի հետ, ուստի ներկայիս երկիմաստությունն անընդունելի է երկարաժամկետ հեռանկարում, և հնարավոր են փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան դուրս գալ այդ շրջանակից:

Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը, Ռուսաստանի ռեսուրսների ուղղումը դեպի Ուկրաինա և Արևմուտքի հետ Մոսկվայի առճակատումը Թուրքիային նոր հնարավորություններ են ընձեռել տարածաշրջանում իր ներկայությունը ավելացնելու համար: Սակայն Թուրքիան հասկանում է, որ Ռուսաստանը եղել է և կմնա Հարավային Կովկասում ազդեցիկ տերություն և հակված է ավելի շուտ համագործակցել նրա հետ, քան դիմակայել նրան:



Առաջարկներ

- Հայաստանը պետք է իր արևմտյան գործընկերների համար ամրապնդի այն ըմբռնումը, որ 2025թ-ի օգոստոսին Վաշինգտոնի գազաթնաժողովը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծել՝ առնվազն 2022թ-ի հուլիսին ստորագրված հայ-թուրքական համաձայնագրերի իրականացման համար և կոչ անի Նրանց շարունակել բարձրացնել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կարևորությունը թուրք գործընկերների հետ իրենց շփումներում:
- Հայաստանը պետք է պնդի, որ հայ-թուրքական սահմանի բացումը 2025թ-ի օգոստոսի վաշինգտոնյան հռչակագրով նախատեսված հաղորդակցությունների վերականգնման անբաժանելի մասն է և պետք է իրագործվի TRIPP-ի գործարկման հետ միաժամանակ:
- Հայաստանը նաև պետք է ուղերձ հնչեցնի առ այն, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունների պատուհանը հավերժ բաց չի մնալու՝ հաշվի առնելով Ուկրաինայում պատերազմի ավարտից հետո տարածաշրջանային ուժերի հավասարակշռության հնարավոր փոփոխությունները, իսկ ժամկետների ձգձգման Թուրքիայի ներկայիս քաղաքականությունը կարող է բարդացնել տարածաշրջանում երկարատև կայունության հաստատման ջանքերը:
- Հայաստանը պետք է ամերիկացի գործընկերների հետ կիսվի իր մտահոգություններով առ այն, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում առաջընթացի բացակայությունը կարող է խոչընդոտներ ստեղծել 2025թ-ի օգոստոսին ընդունված վաշինգտոնյան հռչակագրի լիարժեք իրականացման համար:
- Հայաստանի կառավարությունը պետք է ավելի արդյունավետ փոխգործակցի Հայաստանի քաղաքացիների և հայկական սփյուռքի հետ՝ սահմանի բացման շարժառիթների, օգուտների և հնարավոր ռիսկերի, ինչպես նաև բացասական հետևանքները մեղմելու իր ռազմավարությունը ներկայացնելու համար և ապահովի կարգավորման ուղղությամբ իր ջանքերի ավելի լավ ընկալումը հայ բնակչության կողմից:



ԱՊՐԻ Արմենիայի մասին

Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտն (ԱՊՐԻ Արմենիա) անկախ վերլուծական կենտրոն և քաղաքականության արձագանքատուր է, որի նպատակն է նպաստել տարածաշրջանային կայունությանը, կայուն զարգացմանն ու քաղաքացիական ներգրավվածությանը:

Մենք վստահելի երկխոսության, անկախ վերլուծությունների և հեղինակավոր գաղափարների կենտրոն ենք և նպատակ ունենք լուծումների վրա կենտրոնացած մտածելակերպի միջոցով աջակցել կարևորագույն քաղաքական հարցերի լուծմանն ու բացահայտել Հայաստանի ներուժը:

Մենք շահագրգիռ կողմերին տրամադրում ենք կառուցողական առաջարկներ և լուծումներ՝ օգնելով կայացնել այնպիսի որոշումներ, որոնք կբացահայտեն հայ ժողովրդի զարգացման ներուժը և կհանգեցնեն դրական արդյունքների: Մեր ծրագրերն ու նախաձեռնություններն ուղղված են կոնկրետ խնդիրների լուծմանը:

ԱՊՐԻ Արմենիան ստեղծվել է 2022 թվականին՝ ի պատասխան խորքային գիտելիքի, քաղաքական դինամիկ երկխոսության և Հայաստանի՝ աշխարհաքաղաքական և լոկալ համատեքստի ճշգրիտ պատկերացման անհրաժեշտության: Այն նաև նպատակ ունի ստեղծել հարթակ կարևորագույն քաղաքական հարցերի շուրջ կառուցողական աշխատանքի և պրոֆեսիոնալ մթնոլորտում համագործակցության համար:

<https://doi.org/10.71308/TSZH8539>

Հայաստանի կիրառական քաղաքականության հետազոտական ինստիտուտ
ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան փ. 2/2
connect@apri.institute
apri.institute